ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 1495-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑ 2 ՀԱՍՑԵԻ 08-089-0053-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գառնիկ Վահանի Վարդերեսյանը (ծնված 27/09/1986 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի Գլխավոր փողոց, 2 հասցեի 08-089-0053-0011 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,3202 հեկտար մակերեսով հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված հասարակական նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու և դրանցով զբաղեցված հողամասի գործառնական նշանակությունը փոխելու խնդրանքով:

Սեփականության իրավունքով Գառնիկ Վահանի Վարդերեսյանին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի Գլխավոր փողոց, 2 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 63,96 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով աստիճանահարթակը, կիսանկուղը, օժանդակ շինությունը, շվաքարանը և պարիսպները կառուցվել են 2020 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի

առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024WJQ6A7 ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 28-րդ, 30-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի 3.1-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ցանկի 6-րդ կետի դասակարգումների, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնորինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ կետերի, 15-րդ կետի ա) ենթակետի, 16-րդ կետի ա) ենթակետի և 18-րդ կետի դ) ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Շիրակ բնակավայրի (Շիրակի մարզ, 16-րդ գոտի) համար 0,0874 է և հիմք ընդունելով Գառնիկ Վահանի Վարդերեսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի Գլխավոր փողոց, 2 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 63,96 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով աստիճանահարթակը, կիսանկուղը, օժանդակ շինությունը, շվաքարանը և պարիսպները, ինչպես նաև շինությունների վրա ինքնակամ փակված թվով հինգ և բացված թվով ութ պատուհանները, փակված թվով երկու և բացված թվով երկու դռները ու երկու բացվածքները ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:

2. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված հասարակական նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 20000 դրամ, իսկ ինքնակամ ձևափոխված դռների և պատուհանների յուրաքանչյուր միավորի համար՝ 10000 դրամ և կիրառել 0,0874 գործակիցը:
3. Շինությունների օրինականացման համար հաշվարկված ընդհանուր գումարը կազմում է 128410 (մեկ հարյուր քսանութ հազար, չորս հարյուր տասը) դրամ:
4. Նույն հողամասի վրա գտնվող, իրավունքների պետական գրանցման վկայականում 08-089-0053-0011-001 և 08-089-0053-0011-002 ծածկագրերով գրանցված շինությունների, որոնք հողամասի հատակագծում համարակալված են 1 և 2 համարների տակ, գործառնական նշանակությունները փոխել սպասարկման օբյեկտների գործառնական նշանակության:
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի Գլխավոր փողոց, 2 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-089-0053-0011 կադաստրային ծածկագրով 0,3202 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
6. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
8. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«18» դեկտեմբերի 2024 թվական

գյուղ Ախուրյան